

Պոչխարիոյ համար	12 Ժր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Տարեկան	8 "

Սերիկայի համար	3
Տարեկան	1.50
Վեցամսեայ	

Մանուկան տղա ասու
 չին եղևին համար 40 ս.
 Իսկ վարին երեքի հա-
 մար 20 սանթիմ է. երե-
 ճակ տեղի սկզբակերու
 համար 20 0/0 զեղչ կըլ
 1904
 Վառնայի համար ձև ու կ-40 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

Նախկին և յիստ ղ կն
 հարգութեան հաս-
 ցիկն

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
 ձևի
 (20 ՍԱՆԹԻՄ)
 Պոչխարիոյ համար
 ձևի
 (15 ՍԱՆԹԻՄ)

ՄԱՍԻՆ ԱՅՊԱՆՈՒ ԲԱՂՈՒՅԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ԶՐ Տ ԲԱՆՈՒԻ ՉՈՐԵԲԵԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԻՐԸ

Գրութիւնք և չին տրուի

ՇԱՐՋՈՒՄ Ի ԲԱՍՏԱՆԻ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՏԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԵՍԻՎ ՎՃԱՐԷ

ՀԱՅ ԿՐԵՐԱԿԱՆ ՔԻՆԸ

—(•)—

Արտաքաղի մանուկան շատ
 նշանակալից քաղ մըն է. զոր
 կառնէ այսօր հայ կղերականու-
 թիւնը հայկական ազատագրու-
 թեան յուսադէմին. Հայ կղերա-
 կանութիւնը իբրև որոշ գասա-
 կարգ, և մանուկան իբրև ազ-
 ցի միակ ներկայացուցիչը քա-
 ղաքական աշխարհի մէջ, գրե-
 թէ հայ պարծուալիայի հետ
 ձեռք ձեռքի տուած յանցա-
 տոր անտարբերութիւն մը ցու-
 ցուց յուսահատ ժողովուրդի թա-
 փած արիւն. արցունքի առաջ
 յոյնիակ անոր ինքնասիրու-
 թիւնը չը փրաւորուեցաւ. հե-
 տեւարար և գործի չանցաւ. երբ
 յանուն քրիստոնէութեան կաթո-
 լիկ միսիոնարներն ու բողոքա-
 կան պատուիրակներ հայ լուսաւոր-
 շականութիւնը կը շահագործէ-
 ին. Մէկ կողմէ երկրի մէջ «փա-
 րայով» ժողովուրդը կրօնափոխ
 ընելով, և միւս կողմէ հայ որ-
 րուհիները Եւրոպայի մէջ վա-
 ճառքի հանելով. Անշուշտ եր
 կաթեղէն և նուիրական Իզմիր-
 լեանի օրինակէն խրատուսուած
 եղան կղերներ. որոնք կատա-
 ռեցին իրենց պարտականու-
 թիւնները, սակայն և այնպէս
 հայ կղերականութիւնը իր ամ-
 բողովութեան մէջ, իբրև առան-
 ձին գասակարգ, և կը կրկնենք
 մանուկան իբրև ազգը քաղա-
 քական աշխարհի առաջ ներկա-
 յացնող միակ մարմին. դատա-
 պարտելի անտարբերութեան մէջ
 մնաց. եւ այսօր, ինքնաբերա-
 բար թէ հարկադրեալ, հայ կր-
 ցեականութիւնը կուգայ իր յան-
 ցանքը քառելու. եւ կը կարծենք
 որ անոր այդ կորովի քայլը բո-
 վանդակ հայութեան սրտովն է,
 և որ ելեկտրականացնելով ամ-
 բողջ հայութիւնը կը կապէ զայն
 հինաւուրց էջմիածնին և անոր
 բանտարկուած Լերձուին հետ ա-
 լելի գրական և աւելի անձնու-
 րաց կապերով.
 Պերլինի վեհաժողովէն յետոյ.

այս երկրորդ անգամն է, որ հայ
 կղերականութիւնը ձեռք կառնէ
 եւրոպական արքունիքներու դա-
 ները. նպատակը ընդհանրա-
 պէս միեւնոյնն է — Թիւրքաց
 Հայաստանի Հայերու դրութեան
 զեկուցումը. սակայն, որքան ալ
 որ նպատակը նոյնն է, նոյնը
 չեն պայմաններն ու պահանջը.
 Այն ժամանակ Կոստայ հայրե-
 նաւէր պատրիարք Վարժապետ
 եանն էր, որ պատուիրակութիւն
 կուղարկէր Եւրոպա, այժմ ամե-
 նայն հայոց կաթողիկոս ու Հայ-
 րիկն է, որ այդ քայլը կընէ,
 տեսնելով որ այժմեան Կ. Պոլսոյ
 պատրիարք Օրմանեանը «նուրբ
 քաղաքագէտ» մը ըլլալով կըսու-
 պասէ, որ Հայաստանի մէջ վեր-
 ջին հայն ալ անհետանայ իր
 բողոքներն ու գիւմուսները ընե-
 լու... գերեզմաններուն համար.
 Այն ժամանակ Հայրիկն ինքն
 էր, որ կիրթար հայերու հա-
 մար մարդկային տարրական ի-
 բրաւունքները խնդրելու Եւրոպա-
 լէն, այսօր սակայն ինքն է, որ
 կուղարկէ, և ոչ թէ խնդրելու,
 այլ պահանջելու. Այն ժամանակ
 Լուսինէն էր, որ հայ պատուի-
 րակութիւնը կիջնէր և արգա-
 րութիւն կը խնդրէր ինչ որ
 Փոքր Ասիայի մէկ անյայտ քր-
 իստոնեայ ժողովուրդի մը հա-
 մար, այսօր արիւնի գաշտերէն
 է սակայն, որ հայ պատգամու-
 ւորութիւնը կը ներկայանայ նո-
 ղէն հին արգարութեան անու-
 նով Եւրոպային, և անոնց վե-
 րարկուներէն խուսկին հետ խառն
 և վառօղի հոս կը բորէ. Այսօր
 այն ազգը, որու մասին կը խո-
 սին, և որու մարդկային ու ազ-
 ցային իբրաւունքները կը պա-
 հանջեն որ յարգուած ըլլան, այլ-
 եւս նոյն անձանութ ժողովուրդը
 չէ, այլ քով ծանօթ ազգ մը,
 նոյնիսկ եւրոպական ամենատը-
 գէտ գիւղացուն.
 Սպգ մը, որ իր արիւնով իսկ
 ջնջելով իր մասին կազմուած
 սխալ կարծիքները, կարողացեր
 է ոչ միայն համակրանքի, այլև
 իր անձնուրացութեան հերոսա-

կանու խեղճ նոյնիսկ հիացմուն-
 քի արժանանալ. Այն ժամանակ
 բացի զբողոքի մը ստորկական
 աղերքանքէն ուրիշ ոչինչ չուէ-
 ինք. որ հայ ազգի անունով խո-
 սուղ պատուիրակութեան քայլերն
 ամբողջէր և ձայնին մէջ առի-
 ծի շեշտերը գնէր, այսօր սա-
 կայն այն օրէն սկսած հայ դա-
 տի համար բոլոր կախումները,
 գնտակահարուածները, ողակիչ
 ուսաններն ու զէջքը ձեռքին ըն-
 կածները անոնց հետ են, կախ-
 րապնդեն անոնց քայլերը, և
 ձայնին մէջ ուսմբի և գնտակի
 շեշտերը կը գնեն. Այսօր եւրո-
 պական քաղաքագէտները քրիս-
 տոնէական պարտք մը կատարած
 ըլլալու համար չէ՞ որ կրնգու-
 նին մեր արքայախոսութիւնը,
 այլ ինչպէս հաւասար քաղաքա-
 ցիներ, ինչպէս իբրաւունքի, ա-
 զուտութեան և քաղաքա թիւ-
 թեան հաւասար դաւանակիցներ
 Եւ մենք մեր մարտուծի խնկե-
 լի նահատակներու յիշատակը նո-
 ղէն ու նորէն օրհնելով՝ բարո-
 յական այն բարձրութեանէն, ու
 անոնց սկզբներու վրային մա-
 զընելով հասանք՝ այսօր իրա-
 ւունք ունինք հպարտանալու, և
 մեր այդ խրոխտ հպարտութիւնը
 յանձին մեր կղերական պատուի-
 րակներու՝ ցոլացնելու եւրոպա-
 կան արքունիքներու դահլիճնե-
 րուն մէջ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՐՋՈՒՄՆԵՐ

Լուստանի վերջին համաժողովը նոր
 թուական մըն էր որ բացաւ հայկա-
 կան դատին համար. Այդ համաժող-
 վը, որ կազմուած էր Անգլիոյ Զը-
 րանայի և Իտալիոյ պատգամաւոր-
 ներէն, որոնք իրենց ետեւը միլիո-
 նաւոր ձայներ ունին, չի գոհացաւ լոկ
 խօսքով ու ճառով. Մեզի համար շատ
 էական կէտ մը կայ. որուն վրայ բո-
 լոր պատգամաւորներն այ համաձայ-
 նութիւն կայացուցին. Ընդունելով
 որ չոր խօսքը ազգացութիւն չունի և
 կատարութիւնները կը շարժին մի-
 այն այն ատեն, երբ հասարակու-
 թիւնները ճնշեն իրենց վրայ, ամէն-
 քըն ալ որոշեր են որ իրենց երկրն

մէջ հասարակաց կարծիքը արձարեն.
 մինչեւ որ կատարութիւնները շար-
 մին. Այս համաժողովն առթող բա-
 ցարձակապէս յայտնի եղաւ. նաեւ որ
 եթէ մրանսայի աջակցութիւնը ա-
 պահովուի Անգլիոյ, հայկական խըն-
 դիրը անպայմանօրէն լուծուած պիտի
 ըլլայ. Հ. Յ. Դաշնակցութիւնը ար-
 ցէն որոշած է մրանսայի մէջ աւէն
 եռանդ թափել հասարակութիւնը գոր-
 ծի մղելու համար, և սջակիցները
 չեն որ կը պակսին իրեն. Հայոց կա-
 թողիկոսին զրկած պատգամաւորու-
 թիւնը Բարիզի մէջ շարժուած պիտի
 փութացնէ անշուշտ. Ուրիշ մէկ հե-
 տեւանքն ալ սա՛ եղաւ որ, եւրոպա-
 կան հասարակութեան մէջ փորձեր
 սկսան նոյնիսկ հայ յեղափոխական-
 ներուն ինպատակ անգանակութիւն
 կատարելու. Այս ուրախի երեւոյթ-
 ները աւելի շեշտելու համար, մենք
 Շարժումի ընթացողներուն մաս մաս
 պիտի ներկայացնենք Լուստանի համա-
 ժողովին ասանախօսութեանց ամփո-
 փումները, Հայկական դատը վերջին
 ամիսներուն մէջ շատ մեծ յառաջդի-
 մութիւններ ունեցաւ, և հայ ապս-
 տամբական ուժերէն կախում ունի հի-
 մայ զայն իր յաջող մէկ լուծման
 յանգեցնելը.

Հետեւեալը խօսած է իտալական
 պատուիրակ Բիէթրօ Մածիինի

Ինչ չէք սպասեր անշուշտ որ Արե-
 ւելքի մէջ կատարուած ոճրագործու-
 թեանց մէկ նոր պատմութիւնն ընեմ,
 ոճիրներ՝ այն մարդուն հրամանով
 կատարուած, որ այսուհետեւ յետա-
 գայ սերունդներուն պիտի ճանչցուի
 կարմիր Սուլթան ամօթալից մական-
 նունով.

Շատ երկար ատենէ ի վեր, մենք
 ամէնքս, ապշած ու սխուր, Հայաս-
 տանի ջարդերուն տեսիլքը կուեն-
 նանք մեր աչքերուն առջեւ. վիշտի
 ու զարհուրանքի տեսիլք զոր շատ
 դառն պիտի ըլլար հոս վերարտադրել.
 Իմ պաշտօնս է ձեր առջեւ այձա-
 գանք հանդիսանալ իտալական գայ-
 րոյթին, իմ պաշտօնս է ձեզի հարո-
 ցել որ Իտալիան ամբողջովին կը տա-
 ռապի Հայաստանի մեր եղբայրներուն
 տառապանքներով. Ու Հայաստանի
 մեր եղբայրները կրտսմ, որովհետեւ
 հայրենիքին ու մարդկային անձին ա-
 զատագրութեան ու զարգացման հա-
 մար կատարուող մարտիրոսութեան
 առջեւ օտար հայրենիքը գոյութիւն
 չունի, տեղի տարբերութիւնը կը
 ջնջուի, եւ կը մնայ միակ հայրե-
 նիք մը՝ աշխարհը, միակ ցեղ մը՝
 մարդկութիւնը (ևրկուր ծախահարու-

